

2018թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 125-րդ հոդվածի և ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2008թ. մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի 49-րդ կետի պահանջները՝ ներկայացնում ենք 2018թ. ընթացքում «ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից բացահայտված էական փաստերն ու տեղեկությունները, և միաժամանակ հաստատում ենք, որ սույն հաշվետվության մեջ ներառված փաստերն ու տեղեկությունները հավաստի և լիարժեք են ու չեն պարունակում այնպիսի բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել տվյալ փաստաթղթի իմաստն ու ամբողջականությունը:

Տեղեկացնում ենք, որ նշված նյութերը հրապարակվել են նաև Բանկի ինտերնետային կայքում՝ հետևյալ հղումով.

<https://www.acba.am/hy/announcements/ACBA-shares>

Առդիր 13 էջ:

Հակոբ Անդրեասյան

(անուն, ազգանուն)

Գլխավոր
գործադիր տնօրենի

(պաշտոն)



(ստորագրություն)

02.05.2019թ

(ամսաթիվ)



Տեղեկացնում ենք, որ 14.03.2018թ.-ից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը (AMACBAB22ER8, ACBAB2), ցուցակվելու և ընդգրկվելու են պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, ինչպես նաև թույլատրվել է դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը: Երկրորդային շուկայում Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի իրացվելիության ապահովման նպատակով շուկա ստեղծողի գործառնություններն իրականացնում է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ:

Կից ներկայացնում ենք «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկվելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ Գլխավոր տնօրենի 2018 թվականի մարտի 7-ի թիվ ՑՊ-005-03/18 որոշումը:

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2018 թվականի N ՑՊ-005-03/18

ք. Երևան

**«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի փետրվարի 28-ի հայտը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 9.2% եկամտաբերությամբ, 10,000 (տասը հազար) հատ անվանական պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի մարտի 6-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. «ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս մարման ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 9.2% եկամտաբերությամբ, 10,000 (տասը հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMACBAB22ER8 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ACBAB2 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մարտի 14-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ**ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

Սույնով տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Մանրածախ բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Սեդրակ Զավադյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է ս.թ. ապրիլի 10-ին:

Միննույն ժամանակ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Ջարգացման և Մարքեթինգի վարչության պետ Արսեն Մելքոնյանը նշանակվել է Բիզնես գործառնությունների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

Ինչպես նաև, Բանկի ՓՄՁ, Կորպորատիվ և Գյուղատնտեսական բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Նորիկ Նազարյանը նշանակվել է Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ փոխվել է նաև «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ վարչակազմակերպական կառուցվածքը, որը ներկայացված է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում հետևյալ հղումով.

https://www.acba.am/files/Bank_Structure_ARM.pdf

Հայտնում ենք, որ նախկինում «ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Կենտրոնական Գրասենյակի ներքո գործող Հաճախորդների սպասարկման բաժնին
շնորհվել է մասնաճյուղի կարգավիճակ, որով պայմանավորված սույն թվականի
ապրիլի 10-ից ք. Երևան Արամի 82-84 հասցեում գործում է Բանկի «Կենտրոն»
մասնաճյուղը:

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի ապրիլի 27-ին գումարվել և անց է կացվել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ 26/04/2018թ.-ի Խորհրդի նիստի թիվ 94-3.3 որոշումը և հաշվի առնելով Բանկի 2017 թվականի ֆինանսական արդյունքները՝ ժողովի որոշմամբ որոշվել է Բանկի 2017թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել 3,750,000,000 /երեք միլիարդ յոթ հարյուր հիսուն միլիոն/ ՀՀ դրամ որպես տարեկան շահութաբաժիններ (յուրաքանչյուր բաժնետոմսի դիմաց 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ):

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 26/04/2017թ.-ի Խորհրդի նիստի թիվ 94-3.5 որոշմամբ Բանկի Խորհուրդը հաստատել է նոր՝ դոլարային և դրամային պարտատոմսերի թողարկումը:

Համաձայն Խորհրդի որոշման՝ պարտատոմսերի թողարկումը կիրականանա հետևյալ հիմնական պայմաններին համապատասխան.

- Պարտատոմսի տեսակը՝ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր;
- Պարտատոմսի արժույթը՝ ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ;
- Թողարկման ընդհանուր ծավալը՝ առավելագույնը 15 000 000 ԱՄՆ դոլար, 1 000 000 000 ՀՀ դրամ;
- Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար , 100 000 ՀՀ դրամ;
- Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ ենթակա է որոշման Բանկի Գործադիր մարմնի կողմից յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները հաստատելիս
- Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային;
- Պարտատոմսերի քանակը՝ Առավելագույնը՝ 150 000 հատ ԱՄՆ դոլարով , 20 000 հատ ՀՀ դրամով
- Պարտատոմսերը ենթակա են ցուցակման «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում:

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ 26/04/2017թ.-ի Խորհրդի նիստի թիվ 94-3.6

որոշմամբ Բանկի Խորհուրդը որոշել է ստեղծել «Էրեբունի» մասնաճյուղ, որը հետագայում սահմանված կարգով կներկայացվի գրանցման ՀՀ ԿԲ:

Սույնով տեղեկացնում ենք, որ ս.թ. սեպտեմբերի 1-ից պաշտոնապես բացվել է Բանկի «ՆՈՐ ԱՎԱՆ» նորարարական մասնաճյուղը, որն առանձնանում է բանկային ծառայությունների մատուցման բացառիկ ինովացիոն լուծումներով:

Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած փորձարարական մասնաճյուղը միտված է Բանկի հեռահար սպասարկման գործիքների կիրառմանը և հաճախորդների ուսուցմանը:

«ՆՈՐ ԱՎԱՆ» մասնաճյուղը գործում է ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/15, 4 հասցեում:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ս.թ. հուլիս 12-ից մինչև ս.թ հոկտեմբերի 12-ը ներառյալ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխվող Բանկի անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային AMACBAB23ER6 թողարկման՝ 2 854 300 (երկու միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր) ԱՄՆ դոլար չտեղաբաշխված ծավալով և AMACBAB24ER4 թողարկման 19 100 000 (տասնինը միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ չտեղաբաշխված ծավալով պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամկետը երակարաձգվել է մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը ներառյալ:

Վերոնշյալ որոշումը կայացվել է համաձայն Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հրամանի՝ հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2018թ. հունիսի 30-ին ՀՀ ԿԲ կողմից գրանցված Պարտատոմսերի Ծրագրային Ազդագրի 3.4.1.2 կետում նշված դրույթն առ այն, որ մինչև պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի առաջնային տեղաբաշխման ավարտը չտեղաբաշխված պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամկետը կարող է երկարաձգվել Բանկի գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ մինչև 20 օրացուցային օրով՝ Ազդագրում սահմանված պայմաններով:

Տեղեկացնում ենք, որ տեղի ունեցել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերի կառուցվածքի փոփոխություն:

Այժմ Բանկի բաժնետերերի կառուցվածքը հետևյալն է՝

- «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը – 93.52%,
- «Սակամ Ինտերնասիոնալ» պարզ բաժնետիրական ընկերությունը («ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էս.Էյ.» բանկային խմբի անդամ) – 6.48%:

Տեղեկացնում ենք, որ 16.11.2018թ.-ից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային դոլարային (AMACBAB23ER6, ACBAB3) և դրամային (AMACBAB24ER4, ACBAB4) պարտատոմսերը, ցուցակվել և ընդգրկվել են պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, ինչպես նաև թույլատրվել է դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը: Երկրորդային շուկայում Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի իրացվելիության ապահովման նպատակով շուկա ստեղծողի գործառնություններն իրականացնում է «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ:

Կից ներկայացնում ենք «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու մասին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ Գլխավոր տնօրենի 2018 թվականի նոյեմբերի 16-ի թիվ ՑՊ-033-11/18 և ՑՊ-034-11/18 որոշումները:

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2018 թվականի N ՑՊ-034-11/18

ք. Երևան

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի նոյեմբերի 07-ի հայտը 100 (հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս մարման ժամկետով, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 27,547 (քսանյոթ հազար հինգ հարյուր քառասունյոթ) հատ անվանական պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի նոյեմբերի 09-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 100 (հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս մարման ժամկետով, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 27,547 (քսանյոթ հազար հինգ հարյուր քառասունյոթ) հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMACBAB23ER6 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ACBAB3 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և կազմակերպել որոշման մասին տեղեկությունների հրապարակումը Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի նոյեմբերի 21-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ



ՀԱՅՎ ԵԳԱՆՅԱՆ

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Տ Ն Օ Ր Ե Ն Ի Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2018 թվականի N ՑՊ-033-11/18

ք. Երևան

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի հոկտեմբերի 29-ի հայտը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս մարման ժամկետով, տարեկան 9.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 7,000 (յոթ հազար) հատ անվանական պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի նոյեմբերի 9-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի գ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 24 ամիս մարման ժամկետով, տարեկան 9.5% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 7,000 (յոթ հազար) հատ անվանական պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMACBAB24ER4 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ACBAB4 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի նոյեմբերի 21-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ**ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**